

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
մայիսի 31-ի N 684 -Ն որոշման

<<Հավելված N 2
ՀՀ կառավարության 2003 թվականի
հունիսի 13-ի N 780 -Ն որոշման

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՆՑ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ԱՆԺԱՄԿԵՏ, ԻՍԿ <<ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱ>> ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԻՆ ԼՐԱՆԱԼԸ՝ 2 ՏԱՐԻ ԴԻՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

I. ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զարկերակային գերճնշում, բարդացած կենտրոնական նյարդային համակարգի (շարժողական, խոսքի) սրտամկանի, ակնահատակի, երիկամների ախտահարումով՝ ֆունկցիաների կայուն խիստ արտահայտված խանգարումով:

2. Սրտի իշեմիկ հիվանդություն՝ կորոնար անբավարարությամբ, լարման ստենոկարդիա ֆունկցիոնալ դաս III, IV, արյան շրջանառության 3-րդ աստիճանի կայուն անբավարարությամբ՝ ըստ Ստրաժեսկոյի, կամ IV ֆունկցիոնալ դաս՝ ըստ NYHA:

3. Թոքերի խրոնիկ հիվանդություններ, որոնք ուղեկցվում են շնչական ֆունկցիայի կայուն խիստ արտահայտված խանգարմամբ և արյան շրջանառության 3-րդ աստիճանի անբավարարությամբ:

4. Շաքարային դիաբետ, ծանր ընթացքով և խիստ արտահայտված բարդություններով՝

1) պրոլիֆերատիվ անգիոպաթիա.

2) երիկամային անբավարարություն՝ 3-րդ փուլ (տերմինալ փուլ).

3) սրտային անբավարարություն՝ 3-րդ փուլ.

4) ստորին ծայրանդամների դիաբետիկ խիստ արտահայտված անգիոպաթիա՝ չորրորդ փուլ (նեկրոտիկ ստադիա).

5) երրորդ աստիճանի էնցեֆալոպաթիա թուլամտությամբ:

5. Չարորակ նորագոյացություններ արմատական բուժումից հետո, մետաստազներով, ախտադարձներով, բուժման անարդյունավետության կամ բուժման ոչ ենթակա դեպքերում արտահայտված ինտոքսիկացիայով, կախերսիայով, ուռուցքի քայքայումով:

6. Պատվաստված օրգաններ:

7. Ստամոքսի լրիվ հեռացում:

8. Մեկ թոքի բացակայություն:

II. ՆՅԱՐԴԱՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. Կենտրոնական նյարդային համակարգի խրոնիկ պրոգրեսիվող հիվանդություններ (էնցեֆալիտ, կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ, ցրված սկլերոզ, պարկինսոնիզմ և այլն), շարժողական, խոսակցական, տեսողական և գլխուղեղի վնասվածքային ախտահարման հեռավոր կայուն մնացորդային երևույթներ խիստ արտահայտված շարժողական խանգարումներով՝ հեմիպլեգիա, պարապլեգիա, տրիպլեգիա, տետրապլեգիա, տոտալ աֆազիա, արտահայտված սակավամտություն:

10. Ողնուղեղի վնասվածքային ախտահարման հեռավոր կայուն մնացորդային երևույթներ խիստ արտահայտված շարժողական խանգարումներով (հեմիպլեգիա, պարապլեգիա, տրիպլեգիա, տետրապլեգիա, մոնոպլեգիա):

11. Գլխուղեղի և ողնուղեղի բուժման չենթարկվող ուռուցքներ:

III. ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԵՎԱԽԵՂՈՒՄՆԵՐ

12. Բուժման չենթարկվող միզային, կղանքային խտրակներ և ստոմաներ:

13. Կոկորդի հեռացում:

IV. ԱԶՔԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ

14. Երկու աչքի տեսողության սրության զգալի իջեցում տեսողության սրությունը լավ տեսնող աչքում օպտիմալ կրելի շտկումով մինչև 0,03 կամ երկու աչքի կայուն և անվերադարձ փոփոխությունների հետևանքով տեսադաշտի (ծայրամասային ֆիքսման կետից) մինչև 10⁰-ի նեղացում:>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
մայիսի 31-ի N 684 -Ն որոշման

<<Հավելված N 3
ՀՀ կառավարության 2003 թվականի
հունիսի 13-ի N 780 -Ն որոշման

ԱՆՏԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ, ՈՐՈՆՑ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ
ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ԱՆԺԱՄԿԵՏ, ԻՍԿ <<ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱ>> ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝
ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԻՆ ԼՐԱՆԱԼԸ՝ 4 ՏԱՐԻ ԴԻՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

I. ՆԵՐՔԻՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լյարդի ցիռոզ հեպատոսայլենոմեզալիա, դոներակային գերճշում 3-րդ աստիճանի,
ասցիտ:

2. Լիմֆոիդ, արյունաստեղծ և նրանց նման հյուսվածքների չարորակ նորագոյա-
ցություններ արտահայտված ինտոքսիկացիայով և ընդհանուր ծանր վիճակով:

3. Երիկամների խրոնիկ հիվանդություններ խրոնիկ երիկամային 3-րդ աստիճանի
անբավարարությամբ ծրագրային հեմոդիալիզի պայմաններում:

II. ՆՅԱՐԴԱՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Կենտրոնական նյարդային համակարգի խրոնիկ պրոգրեսիվող հիվանդություններ
(էնցեֆալիտ, կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ, ցրված սկլերոզ, պարկինսոնիզմ և այլն),
չարժողական, խոսակցական, տետրական արտահայտված կայուն խանգարումներով
(արտահայտված հեմիպարեզ, պարապարեզ, տրիպարեզ, տետրապարեզ):

5. Գլխուղեղի վնասվածքային ախտահարման հեռավոր կայուն մնացորդային երևույթ-
ներ խիստ արտահայտված շարժողական խանգարումներով (արտահայտված հեմիպարեզ,
պարապարեզ, տրիպարեզ, տետրապարեզ, սակավամտություն):

6. Գլխուղեղի անոթային հիվանդությունների ժամանակ ուղեղի արյան շրջանառության խանգարումների մնացորդային երևույթներ, շարժողական ֆունկցիայի արտահայտված խանգարումներով, պրոգրեսիվող փսիխոզով, թուլամտություն:

7. Ժառանգական նյարդամկանային պրոգրեսիվող հիվանդություններ (Դյուշենի կեղծ հիպերտրոֆիկ մկանային դիստրոֆիա, Վերդինգ-Հոֆֆմանի ողնաշարային ամիոտրոֆիա), պրոգրեսիվող նյարդամկանային հիվանդություններ ցողունային, շարժողական ֆունկցիաների խանգարումով, մկանների ատրոֆիայով:

8. Ողնուղեղի անոթային և վնասվածքային ախտահարման կամ հիվանդության հեռավոր կայուն մնացորդային երևույթներ, շարժողական ֆունկցիայի արտահայտված կայուն խանգարումներով:

9. Պերիֆերիկ նյարդային համակարգի վնասվածքային ախտահարման կամ հիվանդության հեռավոր կայուն մնացորդային երևույթներ, շարժողական ֆունկցիայի արտահայտված կայուն և տրոֆիկ խանգարումներով:

III. ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԵՎԱԽԵՂՈՒՄՆԵՐ

10. Դաստակի չորս մատների անկիլոզ կամ խիստ արտահայտված կոնտրակտուրա ֆունկցիոնալ անհարմար դիրքում, շարժողական ֆունկցիայի կայուն խանգարում, որը հանգեցնում է որևէ աստիճանի կենսագործունեության սահմանափակման:

11. Արմնկային, սրունք-թաթային հողերի խիստ արտահայտված կոնտրակտուրա կամ անկիլոզ, ծայրանդամի և ոտնաթաթի արատավոր դիրքում հենաշարժական ֆունկցիայի կայուն խանգարում, որը հանգեցնում է որևէ աստիճանի կենսագործունեության սահմանափակման:>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ